

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔ - 2

Գիտական հոդվածների ժողովածու

Երևան 2020

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.2Հ  
Լ 304

Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝  
բ.գ.դ. Վ. Լ. Կատվայան  
բ.գ.դ. Լ. Ս. Հովսեփյան  
բ.գ.թ. Ա. Ս. Գալստյան  
բ.գ.թ. Ն.Ս.Սիմոնյան

Լեզու և խոսք -2: Գիտական հոդվածների ժողովածու  
Լ 304 (Էլ. հրապարակում).– Եր.: ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան  
լեզվի ինստիտուտ, 2020.- 167 էջ:

Ժողովածուում տեղ են գտել հայերենի ուսումնասիրության  
տարբեր ոլորտներին (բարբառագիտություն, հայոց լեզվի պատ-  
մություն, կիրառական, ընդհանուր և համեմատական լեզվա-  
բանություն) վերաբերող նյութեր:

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-9235-4-3

© ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2020 (Էլ. հրապ.)

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Լեզվի ձևային նկարագրության ուսումնասիրությունները կիրառական լեզվաբանության արդիական խնդիրներից են: Աշխարհի տարբեր լեզուների ձևային նկարագրությունները նպաստում են մեքենական թարգմանության մեջ, համակարգչային տարբեր ծրագրերում տվյալ լեզուն հաջողությամբ գործարկելուն: Պետք է նշել, որ հայերենը աստիճանաբար մուտք է գործում թվային նոր տեխնոլոգիաների բնագավառ: Տարեցտարի ավելանում են հայերենի ձևայնացման փորձերը, հայերեն էլեկտրոնային տարատեսակ շտեմարանները: Հայերենի լիակատար ձևային նկարագրություն, այնուամենայնիվ, դեռ չի արվել<sup>1</sup>: Չնայած անուբանալի է այն փաստը, որ դրական տեղաշարժ կա հայերենը՝ որպես համացանցային լեզու գործառնելու ուսումնասիրությունների բանագավառում:

«Հայերենի բառակազմության ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում»

---

<sup>1</sup> Սարգսյան Մ. Ա., *Հայերենի բառապաշարի ձևային նկարագրության կարևորության մասին*, «Ա. Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., 2019, էջ 92-97:

գիտահետազոտական թեմայի<sup>2</sup> շրջանակներում 2018 թվականից սկսվել են հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանի կազմության աշխատանքները: Հայերենի բառապաշարի ձևային նկարագրությունը և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի կազմումն ունեն կոնկրետ նպատակ, ինչպես՝ բառապաշարի կառուցվածքային համակարգի բացահայտումը, համակարգչային ծրագրերին ծառայելը և այլն: Բառապաշարի ձևային նկարագրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ինչպես կանոնավոր կազմությունների, այնպես էլ բոլոր տարբերակային ձևերի, շեղումների ու անկանոնությունների ամբողջական պատկերը՝ հաճախականության տվյալներով և դրանց ավտոմատ վերլուծության ու սերման հնարավորություններով: Այսինքն՝ էլեկտրոնային շտեմարանը ներկայացնում է արդի հայերենի բառապաշարի բառամիավորների բառակազմական բնութագիրը:

Հայերենի բառապաշարը ձևայնացնելու և համապատասխան էլեկտրոնային շտեմարան ստեղծելու համար լուծվել են հետևյալ **խնդիրները.**

1. ուսումնասիրելով արդի լեզվաբանության մեջ ընդունված լեզվի ձևային նկարագրության սկզբունքներն ու եղանակները՝ մշակվել են հայերենի բառակազմության ձևային նկարագրության ընդհանրական սկզբունքներ,

---

<sup>2</sup> Ծրագիրն իրականացվում է Գալուստ Կիլպէնկեան ֆիմնարկութեան հովանավորությամբ:

2. որոշվել է բառապաշարի մոտավոր ծավալը, որի ձևային նկարագրությունը նախատեսվում է իրականացնել (այժմ շտեմարանում մուտքագրված է շուրջ 150 000 գլխաբառ, աշխատանքները հընթացս շարունակվում են, նախատեսվում է նորկայացնել արդի հայերենի ողջ բառապաշարը),

3. բառարաններից առանձնացվել և մշակվել են համապատասխան բառամիավորները (շուրջ 150 000 գլխաբառ),

4. կատարվել է ընտրված բառամիավորների ձևային նկարագրություն բառակազմական տեսակետից, ըստ այդմ` առանձնացվել են կազմությամբ **պարզ կամ արմատական** բառերը և **բաղադրյալ բառերը**, որոնց կազմի մեջ մտնում են`

- բարդություններ (համադրական և վերլուծական),
- ածանցավոր կազմություններ,

5. կատարվել է վերոնշյալ բառերի բառակազմական վերլուծություն,

6. առանձնացնելով լեզվական նյութը` մշակվել են համապատասխան էլեկտրոնային շտեմարանի կազմության սկզբունքները,

7. ստեղծվել է էլեկտրոնային շտեմարանի կառուցվածքը/կադապարը,

8. օգտագործելով վեբ տեխնոլոգիաների հնարավորությունները` ստեղծվել է համացանցային ինքնուրույն կայքում գործող էլեկտրոնային շտեմարան` **formlang.am** վեբ հասցեի

ներքո, որը, մեծաձավալ տվյալների հենքից բացի, ունի որոնելու լայն հնարավորությունները:

Հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանը կազմված է հիմնական և երկրորդական աղյուսակներից: Հիմնական աղյուսակները հետևյալն են՝ **գլխաբառ, հիմք, արմատ, ածանց, ա հոդակապ, յ կիսաձայն, բառակազմական քայլերի հաջորդականություն, նշումներ**: Երկրորդական են **հիմքի տարբերակային ձև, մաքուր արմատ, արմատի տարբերակային ձև, նախաձանց, վերջաձանց, բայական ածանց, միջաձանց** աղյուսակները:

**Գլխաբառ** աղյուսակում ներկայացված են այն բառերը, որոնց ձևային նկարագրությունը պետք է տրվի: Սա կրկնվող արժեքներ թույլ չտվող աղյուսակ է:

**Հիմք** աղյուսակում ներկայացված է բառերի բառակազմական հիմքը, որը բառի՝ բառակազմական վերջին քայլից առաջ ընկած հատվածն է: Ծրագրաշարը մշակված է այնպես, որ այս աղյուսակը կապված է **Բառաձև** աղյուսակին և լրացվում է համակարգի կողմից: Այս աղյուսակը տեքստային տիպի է և թույլ է տալիս կրկնվող արժեքներ:

**Հիմքի տարբերակային ձև** աղյուսակը ցույց է տալիս բառակազմական հիմքի երկակիությունը: Ինչպես Հիմք աղյուսակը, սա ևս տեքստային տիպի է, թույլ է տալիս կրկնվող արժեքներ և կապված է **Բառաձև** դաշտի հետ:

**Արմատ** աղյուսակը ցույց է տալիս բառի հիմնական մասը, որը կարող է լինել մեկից ավելի: Այս աղյուսակը լրացվում է **Բառաձև** աղյուսակի բովանդակության կրկնությամբ: Աղյուսակը տեքստային

տիպի է, և թույլ են տրվում կրկնվող արժեքներ: Արմատներ դաշտում բառերի արմատները լրացվում են այնպես, ինչպես ներկայացված են Բառաձև դաշտում, իսկ արմատի փոփոխությունները ներկայացվում են Նշումներ դաշտում:

**Մաքուր արմատ** աղյուսակը ցույց է տալիս, թե արդյոք տվյալ արմատը մաքուր է: Այսինքն՝ կա՞ն արդյոք արմատի կազմում այլ մասնիկներ: Մա Այո/Ոչ տիպի աղյուսակ է:

**Արմատի տարբերակային ձև** աղյուսակը ցույց է տալիս արմատի երկակիությունը և լրացվում է Բառաձև աղյուսակի բովանդակության կրկնությամբ: Աղյուսակը, ինչպես որ Արմատ աղյուսակը, տեքստային տիպի է և թույլ է տալիս կրկնվող արժեքներ:

**Ածանց** աղյուսակը ներկայացնում է ոչ միայն ածանցների ամբողջական ցանկը (որը որպես այդպիսին ներկայացվում է առաջին անգամ), այլև ներառում է այդ ածանցների մասին մանրամասն տեղեկատվություն պարունակող չորս ենթադաշտ՝ *նախածանց*, *վերջածանց*, *միջածանց*, *բայական ածանց*: Ներկայացվում է, թե տվյալ ածանցը ինչ ածանց է, քանի տարբերակով է հանդես գալիս (ածանցի տարբերակային ձևերը), ածանցը կարող է արդյոք հնչյունափոխության ենթարկվել, թե՛ ոչ, եթե այո, ապա ներկայացվում է նաև տվյալ ածանցի հնչյունափոխված տարբերակը: Ածանցներ աղյուսակի չորս դաշտերը կապված են: Համակարգը նախածանցներ և վերջածանցներ հայտնաբերելիս ավտոմատ լրացնում է դրանք: Այս դաշտերը պարտադիր դաշտեր չեն և կարող են լինել մեկից ավելի:

*Ա հողակապ* աղյուսակը ցույց է տալիս, թե արդյոք բառի բաղադրիչները կապված են ա հողակապով: Սա կարող է լինել մեկից ավելի և Այո/Ոչ տիպի աղյուսակ է:

*Յ կիսաձայն* աղյուսակը ցույց է տալիս, թե արդյոք բառի կազմում կա յ կիսաձայն: Սա ևս Այո/Ոչ տիպի աղյուսակ է:

*Բառակազմական քայլերի հաջորդականություն* աղյուսակը ցույց է տալիս, թե բառակազմական քանի քայլով է կազմվել տվյալ բառը: Սա թվային տիպի դաշտ է, լրացվում է ավտոմատ: Բառերի բառակազմական քայլերի թիվը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ բառի հիմնական բաղադրիչների թվից հանած մեկ սկզբունքով:

*Նշումներ* աղյուսակը հավելյալ դաշտ է, տեքստային տիպի է, լրացվում է ըստ անհրաժեշտության: Այսինքն՝ այս դաշտը ոչ միայն կարող է լրացվել տվյալ բառի մասին համապատասխան հավելյալ տեղեկություններով, այլև կարող է մնալ չլրացված:

Ծրագրաշարը մշակված է այնպես, որ շտեմարանում տվյալներ մուտքագրելիս համակարգը հեռացնում է կրկնությունները: Շտեմարանի տվյալները ենթակա են խմբագրման, սակայն միայն հեղինակների կողմից: Շտեմարանում տվյալների մուտքագրման փուլից հետո կարելի է որոնման համակարգով գտնել անհրաժեշտ տվյալներ, իրականացնել տվյալների համեմատություններ, դիտումներ, խմբագրումներ և այլն: Օգտատերերը տվյալների շտեմարանից կարող են օգտվել որոնումների շնորհիվ: Որոնումներն ու հարցումները կազմակերպելու համար ստեղծվել է կադապար, որը բառակազմության ձևային նկարագրման

շտեմարանի օգտատերերին հնարավորություն է տալիս ստանալ իրենց հետաքրքրող տվյալները:

Շտեմարանում հնարավոր է կատարել երկու տիպի հարցում՝ սովորական և ընդլայնված: Սովորական հարցում կատարելիս որոնումը կազմակերպվում է ըստ բառի: Ընդլայնված հարցումները հնարավորություն են տալիս տեսնելու տարբերակային ձևերի, շեղումների և անկանոնությունների ամբողջական պատկերը: Շտեմարանում հնարավոր է կատարել հետևյալ հարցումները.

1. Որոնել ըստ բառի
2. Որոնել  $\times$  հիմքով բառերը
3. Որոնել բառակազմական  $\times$  քայլով կազմված բառերը
4. Որոնել  $\times$  ածանցով բառերը
5. Որոնել  $\times$  արմատով բառերը /  $\times$  բառափունջը
6. Որոնել  $\times$  տիպի ածանց (նախաածանց, վերջածանց, միջածանց, բայական ածանց) ունեցող բառերը
7. Որոնել հնչյունափոխված հիմքով բառերը
8. Որոնել մաքուր հիմք ունեցող բառերը
9. Որոնել  $\times$  քանակի ածանց ունեցող բառերը
10. Որոնել  $\times$  քանակի արմատ ունեցող բառերը

*FormLang* ☰

Database search fields

Search by word

Search words with x stem

Search words formed with x derivational steps

Search words with x affixes

Search words with x roots and x word groups

Search x types of affix, prefix, suffix, infix and verbal affixes

Search words with sound interchanged roots Yes

Search words with pure roots Yes

Search words with x affixes

Search words with x roots / x word groups

Օրինակ, երբ ընդլայնված որոնում կատարենք և փնտրենք «կազդուրեցուցիչ» բառը, էկրանին կհայտնվի հետևյալ պատկերը.

---

| <b>Lemma</b>               | կազդուրնցուցիչ   |                     |  |      |      |                     |         |     |          |
|----------------------------|--|---------------------|--|------|------|---------------------|---------|-----|----------|
| <b>Stem</b>                | կազդուրնցուց   |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Stem Variative Form</b> |  |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Prefix</b>              |  |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Roots</b>               | <table border="1"> <thead> <tr> <th>Root</th> <th>Pure</th> <th>Root Variative Form</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>կազդուր</td> <td>Այր</td> <td>կազդույր</td> </tr> </tbody> </table> |                     |  | Root | Pure | Root Variative Form | կազդուր | Այր | կազդույր |
| Root                       | Pure   | Root Variative Form |  |      |      |                     |         |     |          |
| կազդուր                    | Այր  | կազդույր            |  |      |      |                     |         |     |          |
| <b>Verb Affix</b>          | եց   |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Infix</b>               |  |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Connecting Vowel A</b>  | No   |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Interfix Y</b>          | No   |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Suffix</b>              | ուց<br>իչ  |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Ordinal Steps</b>       | 3  |                     |  |      |      |                     |         |     |          |
| <b>Notes</b>               | զբբ. պատմատական բայի հիմք (կազդուր+եացուց) +իչ ոլուց, ուլու եացեց, ուցուց  |                     |  |      |      |                     |         |     |          |

Էլեկտրոնային այս շտեմարանը կարևորվում է նաև նրանով, որ ունի հիմնական և երկրորդական ձևայինների որոնման հնարավորություն: Դա նշանակում է՝ ցանկացած արմատի կամ ածանցի որոնման ժամանակ Էլրանին հայտնվում են դրանց բառափնջերը, այսինքն՝ դրանցով կազմված պարզ, բարդ և ածանցավոր բոլոր բառերը:

Այս էլեկտրոնային շտեմարանն իր տեսակի մեջ, ըստ էության, եզակի է՝ ծավալով և բառային նյութի ընդգրկումով, կարող է լիովին լուծել բառերի կազմության հետ կապված խնդիրները: Շտեմարանը կարող է

ծառայել հասարկության լայն շրջանակներին, մասնավորապես այն կարող է օգտակար լինել.

1. լեզվաբաններին կամ բանասիրական ֆակուլտետների ուսանողությանը, որոնք ցանկանում են.
  - համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով քննել հայերենի բառակազմությունը, բացահայտել նոր բառերի կազմության հիմնական օրինաչափությունները,
  - տասնյակ հազարավոր օրինակների միջոցով պարզել հայերենի բառակազմության սկզբունքներն ու եղանակները,
  - կոնկրետ բառաքանակով առանձնացնել հայերենի պարզ կամ արմատական բոլոր բառերը, ածանցավոր բառերը և երկբաղադրիչ ու բազմաբաղադրիչ բարդությունները,
2. հայերենով հետաքրքրվող ցանկացած մարդու, հայերենին ոչ բավարար մակարդակով տիրապետողների համար, որոնք էլեկտրոնային մեծածավալ շտեմարանում կարող են որոնել և գտնել իրենց հետաքրքրող ցանկացած բառի բառակազմական բնութագիրը,
3. դպրոցականներին, դիմորդներին, ուսուցիչներին, որոնք ցանկանում են պատկերացում կազմել հայերենի բառակազմության մասին, ցանկանում են ճշտել, ստուգել որևէ բառի բառակազմության մասին ինֆորմացիա, գտնել կամայական բառերի բառափունջը, ձևությունները ևն:
4. շտեմարանն էապես կօժանդակի նաև օտարազգի այն հայագետներին, որոնք հետաքրքրվում են հայերենի

բառակազմութեամբ՝ իբրև նոր բառերի ստեղծման հիմնական եղանակ, կամ կատարում են զուգադրական-տիպարանական աշխատանք:

Meri Sargsyan- The Features of the Electronic Database of the Armenian Word-Formation.- The database of the formal description of Armenian language vocabulary enables to find necessary data by a search system, to realize data comparison, observation. To do all these we have created a model, which enables all users of the database of the formal description of vocabulary to get the needed information. The database queries enable us to get the complete picture of word-formation, exceptions, irregularities. Two types of searches may be expanded: simple and advances. Our electronic database is unique in its kind, with the volume and vocabulary coverage, and will completely solve the problems of word-formation. The database can serve a wide range of people.

Мери Саргсян- Особенности электронной базы данных армянского словообразования. - База данных формального описания лексики армянского языка позволяет находить необходимые данные с помощью поисковой системы, осуществлять сравнение данных, наблюдение. Для всего этого мы создали модель, которая позволяет всем пользователям базы данных формального описания словообразования получить необходимую

информацию. Запросы позволяют получить полное представление о словообразовании, исключениях, неточностях. Можно выполнять два типа поиска: простой и расширенный. Наша электронная база данных уникальна по своему объему и словарному охвату и полностью решит проблемы словообразования. База данных может обслуживать широкий круг людей.